# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 112

## ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք. Երևան 28. 06. 2019թ

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ԲԲԸ-ն, հետագայում «Կատարող», ի դեմս տնօրեն Մ.Մ. Սարգսյանի, որը գործում է ըստ ԲԲԸ կանոնադրության և ՀՀ կառավարության հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրման լիցենզիայի , մի կողմից – Նոյեմբերյանի պետական քոլեջ ՊՈԱԿ հետագայում«Պատվիրատու» ի դեմս տնօրեն Ա.Ղազարյանի որը գործում է ըստ կանոնադրության , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել դիպլոմների և դիպլոմների հավելվածների մատուցման ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Աշխատանքների կատարման և մատուցման ժամկետն է 2019թ.

1.3. Ծառայությունները մատուցվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված միասնական բաշխման ցուցակի համաձայն:

1.4. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Կատարողը պարտավոր է*

ա) ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

բ) անձամբ կատարել ծառայությունները,

գ) Պատվիրատուի պահանջով տասը աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գնին և քանակին համապատասխան:

2.3. *Պատվիրատուն իրավունք ունի*

ա) ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը,

բ) մինչև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մատուցված ծառայությունների չափին մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով մեկ դիպլոմի գինը կազմում է 3200(երեք հազար երկու հարյուր)դրամ: Գնի մեջ ներառված է նաև ավելացված արժեքի հարկը:

3.2.ա) Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է ծառայությունների մատուցումից հետո :

բ) Պայմանագրային գինը պատվիրատուի կողմից կարող է վճարվել նաև կանխավճարային կարգով:

### 4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Կողմերի միջև ծագող վեճերի հարցերը լուծվում են բանակցությունների կարգով, երկկողմ համաձայնության չգալու դեպքում ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.2. Սույն պյմանագիրը կազմված է մեկ թերթից, 2 էջով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3. Կողմերի հասցեները և վավերապայմանները

| ԿԱՏԱՐՈՂ | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ |
|---|---|
| «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՁ ԲԲԸ | Նոյեմբերյանի պետական քոլեջ ՊՈԱԿ |
| Երևան, 0056, Նոր Նորքի 1-ին զանգված | Ք. Նոյեմբերյան, Շիրազի 17 |
| Սաֆարյան փ. 11/1 | Հ/Հ900398000357 |
| Հ/Հ 220463330997000 | ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն |
| Ագբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ | ՀՎՀՀ 07400783 |
| ՀՎՀՀ 02502806 | |
| ՏՆՕՐԵՆ | ՏՆՕՐԵՆ |
| Ս.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ | Ա. ՂԱԶԱՐՅԱՆ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |